ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

մայիսի 2021 թվականի №Ա
քաղ. Երևան

ՀՐԱԶԴԱՆ ԳԵՏԻ ՄՈՏ ԿԱՌՈՒՑՎՈՂ ՊՈՄՊԱԿԱՅԱՆԻ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի (այսուհետ՝ Դիմող անձ) 2021 թվականի ապրիլի 5-ի №22/01-7458 գրությունը, որով վերջինս դիմել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերություն (այսուհետ՝ Ընկերություն)՝ Շենգավիթ վարչական շրջանի Արագածի փողոցի №93 և №93ա շենքերի հարակից տարածքում նախատեսվող այգու ոռոգման համար Հրազդան գետի մոտ կառուցվող պոմպակայանի սպառման համակարգն (այսուհետ՝ Սպառման համակարգ) էլեկտրական ցանցին միացնելու նպատակով տեխնիկական պայմաններ տրամադրելու խնդրանքով,

բ) որ Սպառման համակարգն Ընկերության էլեկտրական ցանցին միացվում է Դիմող անձի դիմումի համաձայն՝ որպես առանձին սպառման համակարգ, և որպես բաժանորդ հանդես է գալիս Շենգավիթ վարչական շրջանը,

գ) Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի 2021 թվականի ապրիլի 16-ի №22/01-8641 գրությունը, որի համաձայն՝ վերոնշյալ պոմպակայանի կառուցման համար նախատեսված տարածքը հանդիսանում է համայնքային սեփականություն,

դ) Ընկերության 2021 թվականի ապրիլի 22-ի №Ե-144-21 և Դիմող անձի 2021 թվականի ապրիլի 26-ի գրությունները, որոնց համաձայն՝ վերջիններս չեն առարկում Սպառման համակարգն էլեկտրական ցանցին սույն որոշմամբ սահմանված ընթացակարգով միացնելուն,

և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշմամբ հաստատված էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների (այսուհետ՝ Կանոններ) 13.8 կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ Սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացվում է Կանոնների 14.4 կետով սահմանված կարգով տեխնիկական պայմաններ տրամադրելու միջոցով՝ առանց Կանոնների 13.2 կետի 5-րդ ենթակետով պահանջվող փաստաթուղթը ներկայացնելու:

2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ չի թույլատրվում Դիմող անձից պահանջել կատարել վճարումներ, տրամադրել հատուցում, ներկայացնել տեղեկատվություն և փաստաթղթեր կամ նրան ծանրաբեռնել պարտավորություններով, եթե դրանք սահմանված չեն էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով, այլ նորմատիվ իրավական ակտերով, սույն որոշմամբ կամ էլեկտրամատակարարման պայմանագրով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Դիմող անձին և Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
մայիսի 2021թ.